ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

(Հաղթանակի 35-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ն. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

1941 թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան, իր դաշնակիցների հետ միասին, ուխտադրուժ, ավազակային հարձակում գործեց Սովետական Միության վրա, նպատակ ունենալով վերացնել աշխարհում միակ սոցիալիստական պետությունը, ոչնչացնել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով ստեղծված սովետական հանրապետությունները և նրանց ձեռք բերած սոցիալիստական նվաճումները, մեր երկիրը դարձնել գերմանական իմպերիալիզմի գաղութը։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մեր ամբողջ ժողովրդին բարձրացրին Հայրենական մեծ պատերազմի՝ ամեն ինչ հաղթանակի համար լողունգով։ 1418 օր ու գիշեր սովետական բանակը արյունահեղ մարտեր էր մղում ռաղմաճակատում, իսկ թիկունքում ժողովուրդն անդուլ կերպով աշխատում էր հանուն հաղթանակի։

Պատերազմը ցույց տվեց սովետական պետական և հասարակական կարգերի կենսունակությունն ու անպարտելիությունը, սովետական զինված ուժերի ամենահաղթ ուժը, կոմունիստական կուսակցության վարած քաղաքականության լենինյան իմաստությունը, որը մարմնավորվեց կյանքում, ապահովեց Սովետական Միության համաշխարհային պատմական հաղթանակը։ Այդ հաղթանակի շնորհիվ տապալվեց գերմանական ֆաշիզմի ռազմական հզոր մեքենան, փուլ եկավ համաշխարհային գաղութատիրական սիստեմը, ստեղծվեց սոցիալիզմի համաշխարհային համակարգ։

Մեծ հայրենականի հաղթանակը նվաճվեց սովետական բոլոր ժողովուրդների հերոսական ջանքերով։

* * *

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն և հանրապետության կառավարությունը պատերազմի առաջին օրերից անդուլ գործունեություն ծավալեցին կուսակցական, սովետական, տնտեսական ու մյուս կազմակերպությունների ամբողջ աշխատանքը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցելու համար։ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը, Սովետական Հայաստանի կուսակցական-սովետական կազմակերպությունների ամբողջ գործունեությունն ուղղում էր պատերազմից բխող խնդիրների հաջող կենսագործմանը։

Առաջին խնդիրը զինվորական մոբիլիզացիան էր։ 1941 թ. հունիս-սեպտեմբերին Հայկական ՍՍՀ-ին տրված մոբիլիզացիոն առաջադրանքները կատարվեցին՝ պահեստի հրամանատարական կազմինը՝ 100 տոկոսով, կրտսեր հրամանատարական կազմինը՝ 100 տոկոսով, շարքային կազմինը՝ 100 տոկոսով։

Սովետական Հայաստանից զորակոչված հրամանատարները և շարքայինները համալրեցին կարմիր բանակի նոր ստեղծված զորամասերը՝ ռուսների, ուկրաինացիների, վրացիների, ադրբեջանցիների և այլ ժողովուրդների զավակների հետ միասին կազմելով ինտերնացիոնալ մարտական միավորներ։ Սովետական Հայաստանում կազմավորված նոր զորամիավորումները ձիերով ու տեխնիկական միջոցներով ապահովելու առաջադրանքները կատարվեցին՝ ձիերի մոբիլիզացման առաջադրանքը՝ 100 տոկոսով, մարդատար ավտոմեքենաներինը՝ 103 տոկոսով, բեռնատար ավտոմեքենաներինը՝ 100 տոկոսով, տրակտորներինը՝ 100 տոկոսով, մոտոցիկլետներինը՝ 100 տոկոսով։

Հանրապետության կուսակցական և սովետական կազմակերպությունները տնթերի կատարեցին նաև նոր կազմավորվող զորամասերին անհրաժեշտ բնակարանային-զորանոցային շենքեր հատկացնելու, կոմունալ-կենցաղային և տնտեսական միջոցներով ապահովելու գծով տրված առաջադրանքները։ Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և Ժողկոմսովետը հետևում էին այդ առաջադրանքների անթերի կատարմանը։ Կենտկոմի արձանագրությունները վկայում են այն բարձր կազմակերպվածության, խստապահանջության և բացառիկ գործարարության մասին, որ իշխում էին կուսակցական և սովետական օրգաններում։ Զինվորական մոբիլիզացիայի գծով ամբողջ աշխատանքը կատարվում էր հստակ, անառարկելիորեն, հայրենասիրական պարտքի խոր գիտակցությամբ։

Մյուս անմիջական խնդիրն էր երրորդ հնգամյա պլանով նախօրոք սահմանված ժողովրդատնտեսական կանխատեսումների վերակազմումը և անցումը ժողովրդատնտեսական նոր, մոբիլիզացիոն պլանների իրականացմանը։ Հայկական ՍՍՀ Ժողկոմխորհը 1941 թ. հուլիսի սկզբներին քննեց միութենական կառավարության որոշումը «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության մոբիլիզացիոն պլանի մասին»։ Որոշվեց կարճ ժամանակամիջոցում վերակազմել հանրապետության ժողովրդատնտեսական պլանը, սահմանել ժողկոմատների և արտադրական ձեռնարկությունների աշխատանքի նոր ուղղություններն ու կոնկրետ արտադրական առաջադրանքները[1]։

Մոբիլիզացիոն աշխատանքների կարևոր բնագավառներից էին նաև հակաօդային պաշտպանության գծով կիրառվող միջոցառումները, կործանիչ դումարտակների և ժողովրդական աշխարհազորի վաշտերի ստեղծումը, ՍՍՀՄ քաղաքացիների համընդհանուր պարտադիր ռազմական ուսուցման կազմակերպումը, բոլոր քաղաքների, բնակավայրերի, ճանապարհային անցուղիների ու լեռնանցքների շրջաններում պաշտպանական գծերի ու հենակետերի կառուցումը[2]։

---

1 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 6, գ. 35, թ. 131։

2 Տե՛ս «Советская Армения в годы Великой отечественной войны (1941—1945)» (сб. док.), Ереван, 1975, էջ 25, 32, 71 և հմ.։

Ամբողջ հանրապետությունում լայն ծավալ ստացավ մերձճակատային շրջաններից էվակուացված բնակչության, մանկատների, արտադրական ու մշակութային հաստատությունների ընդունումն ու տեղավորումը, հոսպիտալների ստեղծումը և վիրավոր զինվորների բուժման ու կազդուրման գործի կազմակերպումը։

Հայկական ՍՍՀ սովետական ու կուսակցական մարմինները, զինվորական կոմիսարիատները և տնտեսական ձեռնարկությունները, հասարակական կազմակերպությունները պատերազմի առաջին ամիսների ընթացքում հիմնովին վերակառուցեցին իրենց աշխատանքը՝ այն լիովին ենթարկելով սոցիալիստական հայրենիքի պաշտպանության կարիքներին։ Ամեն ինչ կատարվում էր մի դերագույն նպատակի համար՝ պաշտպանել սովետական հայրենիքը, հաղթանակ նվաճել դաժան թշնամու նկատմամբ։ Կուսակցության կենտրոնական օրգան «Պրավդա» թերթում 1941 թ. օգոստոսին հրապարակվեց հատուկ խմբագրական հոդված՝ «Հայ ժողովուրդը Սովետական Միության ազատագրական պատերազմի մարտական մասնակիցն է»։ Այնտեղ ընդգծված է. «Հայ ժողովուրդը իր մարտական տեղն է գրավել իրենց անկախության և ազատության համար Սովետական Միության բոլոր ժողովուրդների մղած ընդհանուր պայքարում»[3]։

* * *

Մեծ հայրենականի հաղթանակի գործում յուրաքանչյուր սովետական հանրապետության և սոցիալիստական ազգի ավանդն ամենից առաջ պետք է գնահատել նրա զավակների մարտական սխրագործություններով՝ սովետական բանակի շարքերում։

Հայ ժողովրդի զավակների զորակոչը սովետական զինված ուժերի շարքերը հետևյալ պատկերն ուներ։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1941 թ. հունիսի 22-ի հրամանագրով բանակ կանչվեցին 1905—1918 թթ. ծնված զինապարտները։ Հետագայում նոր հրամանագրերով զորակոչվեցին նաև ավելի մեծահասակները՝ 1890—1904 և ավելի փոքրահասակները՝ 1918—1925 թթ. ծնված զինապարտները։ Այսպիսով, մոբիլիզացվեցին 1890-ից 1925 թթ., այսինքն՝ 35 տարիների ծնունդ 18—55 տարեկան տղամարդիկ։ Պաշտոնական տվյալներով, Հայրենական մեծ պատերազմի ամբողջ ընթացքում Սովետական Միության բոլոր հանրապետություններից մոբիլիզացված և սովետական զինված ուժերը համալրած հայ զինվորների քանակը հասավ մինչև 500 հազար մարդու[4]։

Հայ զինվորների այդ զանգվածը գործում էր սովետական բանակի համընդհանուր ինտերնացիոնալ կազմ ունեցող զորամիավորումներում, ինչպես նաև Հայկական ՍՍՀ ազգային զորային կազմավորումներում։ Հայաստանի զավակներն ազնվորեն ծառայում էին սովետական զինված ուժերի բոլոր զորատեսակների միավորումներում ու զինվորական ծառայության բոլոր աստիճաններում՝ շարքային մարտիկից մինչև բանակների, զորատե-

---

3 «Правда», 25 օգոստոսի, 1941։

4 Տե՛ս «Սովետական Հայաստանի 50 տարին», Երևան, 1972, էջ 53։ Նույնը՝ «Правда», 30 նոյեմբերի, 1970։

սակների և ռազմաճակատի հրամանատարները։ Հակիրճ վերհիշենք մի քանի դրվագներ։

Պատերազմի առաջին՝ պաշտպանական ժամանակամիջոցում հայ ժողովրդի զավակներն ակտիվորեն կռվում էին հերոս քաղաքների շրջաններում ծավալված պաշտպանողական մարտերում։ Նախ՝ Բրեստի ամրոցում. սովետական երկրի արևմտյան սահմանի վրա գտնվող այդ դարպասը պաշտպանող կայազորի մարտիկների շարքում գործում էին մինչև 200 հայ ռազմիկներ։ Դրանցից էին Ղափանի շրջանից գնացած մարտիկներ Արշավիր Աղագյուլյանը, Սոկրատ Խաչատրյանը, Վաղարշակ Արղումանյանը, Վաչագան Մարգարյանը, Թավադի Բաղդասարյանը, Աշտարակի շրջանի Փարպի գյուղից մեկնած ռազմիկ Մամիկոն Ներսիսյանը և շատ ուրիշներ։ Նրանք, կատարելով զինվորական երդումը, մինչև վերջին շունչը զենքը ցած չդրեցին, կռվեցին և ընկան այդ հերոսամարտում։ Բրեստի շրջանի պաշտպանության կազմակերպիչներից էր գեներալ-մայոր Քրիստափոր Ալահվերդյանը, որը ծանր վիրավոր ընկավ ֆաշիստների ձեռքը, ենթարկվեց խոշտանգումների, բայց մնաց անդրդվելի։ Ֆաշիստները գնդակահարեցին քաջարի զորապետին[5]։

Ուկրաինայի մայրաքաղաք Կիևի պաշտպանության ճակատամարտում աչքի ընկած շատ հայ մարտիկներից հիշատակենք հետախույզ Գառնիկ Կարապետյանին։ Վարդենիսի շրջանում ծնված այդ զինվորը կատարեց այնպիսի քաջագործություններ, որոնց մասին գրում էին կարմիրբանակային թերթերը, քաղաքացիների հրատարակած թերթիկները։ Այնտեղ էլ, Կիևի պաշտպանության դիրքում նա զոհվեց։ Կիևի պաշտպանության հետ միաժամանակ սովետական զորամասերը դաժան մարտեր էին մղում Սմոլենսկի շրջանում, կասեցնում ֆաշիստական հորդաների հարձակումը դեպի Մոսկվա։ Այնտեղ, Սմոլենսկի մատույցներում, 1941 թ. հուլիսի 10-ից մինչև սեպտեմբերի 10-ը անդադրում գործում էր գնդի հրամանատար մայոր Համազասպ Բաբաջանյանը։ Նրա գունդը մասնակցեց Սմոլենսկի մոտ գտնվող Ելնյա քաղաքը ներխուժած ֆաշիստական զորամասերի ջախջախմանը[6]։ Սմոլենսկի ճակատամարտում աչքի ընկած զորամասերը վերակազմվեցին գվարդիականի։ Ստեղծվեցին կարմիր բանակի առաջին գվարդիական զորագնդերը, որոնցից մեկն էլ մայոր Բաբաջանյանի գունդն էր։

Մեծ հայրենականի պաշտպանողական հերոսամարտերի փայլուն էջերից էին Օդեսայի և Սևաստոպոլի ճակատամարտերը։ Օդեսայի պաշտպանության 69 օր տևած մարտերում հերոսական շատ գործեր կատարեցին հրետանու գեներալ Իվան Վեքիլյանը, կատերի հրամանատար Միքայել Սահակյանը, նավաստի Կարլոս Շատվորյանը և ուրիշներ։ Լեգենդար սևաստոպոլցիների շարքերում բոլորը լավ տեղյակ էին «Ժելեզնյակ» զրահագնացքի հրամանատար կապիտան Գուրգեն Սահակյանի մարտական գործերին, հպարտությամբ էին խոսում մերձծովյան բանակի հրամանատարի տեղակալ գնդապետ Հմայակ Մեհրաբյանի մասին, որը միաժամանակ հանդիսանում էր սևծովյան քաղաք-ամրոցի մատակարարման պետը։ Նա 8 ամիս անդադրում գործում էր Սևաստոպոլում, կատարում մարտական խնդիրներ։ Այս-

5 Տե՛ս «Красная звезда» թերթը, 28, 29, 31 օգոստոսի, 1956։
6 Տե՛ս «Сообщения Советского Информбюро», т. 1, М., 1944, էջ 216։

տեղ, Սևաստոպոլի պաշտպանության հերոսամարտում, ռազմանավի վրա զոհվեց քաջարի զնդապետը։

Մոսկվայի պաշտպանության մեծ ճակատամարտում հայ ժողովրդի տասնյակ ու հարյուրավոր զավակներ նվիրաբերեցին իրենց բոլոր ուժերը, իսկ շատերն էլ՝ կյանքը։ Նշենք նրանցից մեկին՝ Հովհաննես Ալիբեկյանին։ Կոփվելով ռուսական երեք հեղափոխությունների բովերում, Ալիբեկյանն այնուհետև ավարտեց կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտը և աշխատում էր Մոսկվայում որպես նոր պատմության պրոֆեսոր։ 1941 թ. աշնանը նա կամավոր գրվեց մոսկվացիների կոմունիստական գումարտակը և որպես զինվոր նետվեց մայրաքաղաքի պաշտպանության գիծը, մասնակցեց թշնամու ջախջախմանն ու ետ մղվելուն Մոսկվայի մատույցներից. այնտեղ էլ, մարտական դիրքում, թշնամու գնդակից զոհվեց պրոֆեսոր-զինվորը։

Հայ զինվորների այդպիսի սխրանքներով է հագեցած Լենինգրադի պաշտպանության 900 օր տևած հերոսամարտի պատմությունը։ Հիշենք Նելսոն Ստեփանյանին, որի խիզախ թռիչքները հիացմունք էին պատճառում և ոգեշնչում լենինգրադցիներին[7]։

Լենինգրադում, Նեվսկայա լավրայում, հերոսների բազմաթիվ կոթողների շարքում կա մի համեստ հուշարձան, որի վրա փորագրված է. «Ընկե՛ր, հանիր գլխարկդ։ Այստեղ թաղված է հայ ժողովրդի նշանավոր զավակ, Լենինգրադի հերոսական պաշտպան, գեներալ-մայոր Բենիամին Հովհաննեսի Գալստյանը»։ Շատ են այդպիսի հուշակոթողները։

Ռազմաճակատներում Հայաստանի զավակների մարտական սխրագործություններն ավելի լայն, զանգվածային բնույթ էին կրում Սովետական Հայաստանի ազգային դիվիզիաների կազմում։ Հայրենական պատերազմում գործում էին հայկական վեց դիվիզիաներ, որոնց շարքերում հաշվվում էին ավելի քան 100 հազար մարտիկներ ու սպաներ։

Հայկական ՍՍՀ առաջին զորային կազմավորումը հանդիսացավ 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան, որը կազմակերպվել էր Հայաստանում սովետական կարգերի հաստատման հետ միաժամանակ։ Նրա առաջին զորահրամանատարները եղել են Ալ. Մյասնիկյանը, ապա լեգենդար Գայը և ուրիշներ։ Դիվիզիան մասնակցեց Ստալինգրադի մեծ ճակատամարտին։ Այդ զորային կազմավորման մարտական գործողությունները բարձր գնահատականի արժանացան սովետական զինված ուժերի հրամանատարության ամփոփագրերում։ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հրատարակած «ՍՍՀՄ համառոտ պատմություն» գրքում կարդում ենք. «Վոլգայի ափերին տեղի ունեցած մեծ ճակատամարտին մասնակցում էին նաև հատուկ ազգային միավորումներ, որոնցից հատկապես աչքի ընկան 38-րդ ղազախական դիվիզիան, որը հետո ստացավ 73-րդ գվարդիական-ստալինգրադյան անվանումը և 76-րդ հայկական լեռնահրաձգային դիվիզիան, որը 1972 թ. նոյեմբերին վերակազմվեց 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի»[8]։

Հայկական ՍՍՀ երկրորդ զորային կազմավորումը ստեղծվեց 1941 թ. դեկտեմբերին. դա 89-րդ դիվիզիան էր, որը, ինչպես նշել է ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը, «դարձավ լեգենդար, իր դրոշները

---

7 Տե՛ս «Ленинградская правда» թերթը, 3 նոյեմբերի 1942։

8 «Краткая история СССР», ч. 2, М., 1972, էջ 347։

հաղթականորեն Կովկասի լեռներից տարավ մինչև Բեռլին»[9]։ Դիվիզիայի հրամանատարներ Անդրանիկ Սարգսյանը, Արտաշես Վասիլյանը, Նվեր Սաֆարյանը մեծ ջանքեր գործադրեցին դիվիզիայի զորագնդերը համալրելու, կոփելու և մարտական առաջադրանքները կատարելու գործում[10]։

Երրորդ հայկական զորային կազմավորումը 390-րդ դիվիզիան էր, որը գործում էր Կերչի թերակղզում 1942 թ. հունվար-մայիսին։ Դիվիզիայի զորամասերը հմտորեն ղեկավարում և մարտի էր տանում գնդապետ Սիմոն Զաքիյանը։

Չորրորդ հայկական զորային կազմավորումը 408-րդ դիվիզիան էր, որը ստեղծվեց 1941 թ. աշնանը։ Դիվիզիայի կազմում ծառայում էին հայ մտավորականության հազարավոր ներկայացուցիչներ։ 1942 թ. սեպտեմբերին Երևանի երկաթգծի կայարան էր հավաքվել հոծ բազմություն՝ այդ դիվիզիան ճանապարհելու ռազմաճակատ։ Հավաքվածների մեջ էր նաև բանաստեղծ Ավետիք Իսահակյանը։ 408-րդ դիվիզիան մասնակցեց Տուապսեի մատույցների պաշտպանության ծանր մարտերին, պատվով կատարեց մարտական խնդիրները[11]։

Հինգերորդ հայկական զորային կազմավորումը 409-րդ դիվիզիան էր, որը ռազմաճակատ մեկնեց 1942 թվականի դեկտեմբերի սկզբներին, մարտի մեջ մտավ Մոզդոկի շրջանում։ Դիվիզիայի զորագնդերը մասնակցեցին Հյուսիսային Կովկասի ազատագրմանը, ապա Ուկրաինայից օկուպանտներին վտարելու համար մղված մարտերին, այնուհետև Հունգարիայի և Ռումինիայի ազատագրմանը, հիտլերյան հորդաների վերջնական ջախջախմանը[12]։

Հայկական հաջորդ զորամիավորումը 1942 թ. կազմակերպված 261-րդ դիվիզիան էր, որը մարտական ռեզերվներ էր պատրաստում և ուղարկում գործող բանակ, ինչպես նաև սահմանապահ զորամասերի հետ հուսալիորեն պաշտպանում էր սովետական պետական սահմանը թուրքական ներխուժման վտանգից։

Հայ ժողովրդի զավակների գերակշռող մեծամասնությունը գործում էր, սակայն, ոչ թե ազգային զորային կազմավորումների, այլ սովետական բանակի բազմազգ ընդհանուր զորամիավորումների շարքերում, որոնք փառապանծ էջեր գրեցին սովետական բանակի հաղթական հարձակողական մարտերում։ Հայ գեներալները, սպաները, շարքային մարտիկներն աչքի ընկան Օրյոլ—Կուրսկ—Բելգորոդի մեծ ճակատամարտում, Դնեպրի անցման և Ուկրաինայի ու Բելոռուսիայի ազատագրման մարտերում, Մերձբալթիկա և Մոլդավիա ներթափանցած ֆաշիստների ջախջախման ու սովետական հողի լիակատար ազատագրման կռիվներում։

Այնուհետև սովետական բանակը նոր թափով մարտեր ծավալեց իր ազատագրական միսիան կատարելու, գերմանա-ֆաշիստական և ճապոնական իմպերիալիզմի լծից Եվրոպայի և Ասիայի ստրկացված ազգերին ազա-

---

9 Л. И. Брежнев, Советской Армении 50 лет, Ереван, 1970, էջ 12։

10 АМО (Архив мин. обороны) СССР, ф. 987, оп. 480831, д. 1, թ. 1—8։

11 Տե՛ս Մարշալ Ա. Գրեչկո, Ճակատամարտ Կովկասի համար, Երևան, 1969, էջ 142—143։

12 АМО СССР, ф. 209, оп. 44648, д. 15, թ. 1—6։

տագրելու համար։ Այդ պատմական մարտերում ևս հայ ռազմիկները հանդես բերեցին իրենց հայրենասիրությունը, հմտությունը և ռազմական վարպետությունը։ Հայ զինվորը սովետական բանակի շարքերում կտրեց-անցավ 10 պետությունների սահմանները՝ իր ավանդը ներդնելով հանուն հաղթանակի մղվող պայքարում։ Միայն Բեռլինի գրավման մեծ ճակատամարտում իրենց զորամասերը հաղթական մարտերի տանելու համար գերագույն գլխավոր հրամանատարության հրամաններում բազմիցս գովասանքի խոսքեր են եղել գեներալներ Սարգիս Մարտիրոսյանի, Սարգիս Գալաջևի, Նվեր Սաֆարյանի, Իսահակ Գասպարյանի և ուրիշների մասին։

Սովետական կառավարությունը բարձր գնահատեց հրամանատարական դիրքերում աչքի ընկած հայ շատ գործիչների. նրանցից Հովհաննես Բաղրամյանին շնորհվեց Սովետական Միության մարշալի կոչում և Սովետական Միության կրկնակի հերոսի կոչում, Համազասպ Բաբաջանյանին՝ տանկային զորքերի գլխավոր մարշալի կոչում, Հովհաննես Իսակովին՝ Սովետական Միության ծովակալի կոչում, Արմենակ Խանփերյան-Խուդյակովին՝ ավիացիայի մարշալի կոչում, ավելի քան 60 հայ հրամանատարներ դարձան սովետական բանակի տարբեր զորատեսակների գեներալներ։ Հայ ժողովրդի զավակներից ավելի քան 100 մարտիկների շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում, իսկ մոտ 70 000 զինվորներ արժանացան մարտական շքանշանների[13]։

* * *

Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի գործում ծանրակշիռ ավանդ ներդրեցին թիկունքի աշխատավորները։ Այդ մասին ընդգծված է սովետական զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարության 1943 թ. նոյեմբերի 7-ի № 309 հրամանում և ուրիշ փաստաթղթերում։

«Կարմիր բանակը չէր կարողանա տանել այս տարվա մեծ հաղթանակները առանց ռազմաճակատին ցույց տրվող համաժողովրդական օգնության»,— գրված է այդ հրամանում։ — Սովետական ժողովուրդը բոլոր ուժերը նվիրում է իր բանակին օգնելու համար։ Անվերջ հոսանքով ռազմաճակատ են գնում սպառազինություն, ռազմամթերք, պարենամթերք, հանդերձանք, Ուրալը և Կուզբասը, Մոսկվան և Պովոլժիեն, Լենինգրադը և Բաքուն, Ղազախստանը և Ուզբեկստանը, Վրաստանը և Հայաստանը, մեր բոլոր հանրապետությունները և մարզերը դարձել են կարմիր բանակի հզոր զինանոց»[14]։

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը, քաղաքային ու շրջանային կոմիտեները, սկզբնական կազմակերպություններն ամեն օր, լարված գործունեություն ծավալելով, ապահովում էին հանրապետության մարդկային ուժերի և ժողովրդական տնտեսության բոլոր հնարավորությունների մոբիլիզացիան՝ ռազմաճակատին համաժողովրդական օգնություն ցույց տալու համար։ Հայաստանի կոմունիստական կուսակցության շարքերում 1941 թ. հունիսին հաշվվում էր 36849 կոմունիստ, որից 20 հազարը

13 Տե՛ս «Советская Армения в годы Великой отечественной войны», էջ 10—11։
14 Տե՛ս «Правда», նոյեմբերի 7, 1943։

մոբիլիզացվեց ռազմաճակատ։ Բանակ ուղարկվեց նաև 70237 կոմերիտական։

Հայաստանի բանվորները, գյուղացիները և մտավորականները պատերազմի ծանր փորձությունների ժամանակ ավելի սերտորեն համախմբվեցին կոմունիստական կազմակերպությունների շուրջը, իրենց բոլոր ուժերը ի սպաս դրեցին հայրենիքի պաշտպանության խնդիրներին։

Պատերազմի առաջին ամիսներին Հայկական ՍՍՀ կառավարությունը ստացավ դիրեկտիվ-նամակ հանրապետության նյութական ռեսուրսները մոբիլիզացնելու մասին։ Այն քննվեց ՀՍՍՀ Ժողովրդական կոմիսարների խորհրդի նիստում, նշվեցին կոնկրետ խնդիրներ ռազմական արտադրանքի թողարկմանն անցնելու ուղղությամբ։

Շուտով Հայաստանի տնտեսական մարմինները ստացան զինվորական գերատեսչությունների պատվերները ռազմաճակատի համար զինամթերքի, զենքի որոշ տեսակների, հանդերձանքի ու ռազմական գույքի արտադրություն կազմակերպելու, այն ծավալելու մասին։

1941 թ. օգոստոսին ՀՍՍՀ կառավարությունը քննարկեց ՍՍՀՄ Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահի տեղակալ Ա. Կոսիգինի կարգադրությունը պաշտպանական արտադրանք թողարկող ձեռնարկություններում բանվորական ուժի ավելի արդյունավետ օգտագործման և արտաժամյա աշխատանքներ կիրառելու կարգի մասին[15]։ Հանրապետության 120 ձեռնարկություններ ամբողջովին վերակազմեցին իրենց աշխատանքը, պլանները և անցան ռազմաճակատի ու բնակչության կարիքների համար արտադրանքի թողարկմանը։ Միաժամանակ շարունակվեց նոր գործարանների ու ֆաբրիկաների կառուցումը և նոր արտադրամասերի կազմակերպումը։

Պատերազմի չորս տարիների ընթացքում սովետական պետությունը Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ ներդրեց 925 միլիոն ռուբլի գումար, կառուցվեցին 30 նոր ձեռնարկություն և ավելի քան 100 նոր արտադրամաս[16]։ Սովետական Հայաստանի բանվորները պատերազմի տարիներին ռազմաճակատին ու բնակչությանը տալիս էին մինչև 300 տեսակի արտադրանք։

Նույնպիսի լարվածությամբ ու հայրենասիրական տոգորվածությամբ էին գործում Հայկական ՍՍՀ գյուղի աշխատավորները։ Պատերազմի դաշտ մեկնածների փոխարեն կոլտնտեսությունների ու սովխոզների արտադրական աշխատանքի մեջ ներգրավվեցին հաղարավոր կանայք, մեծահասակ տղամարդիկ ու պատանիներ, պատրաստվեցին մեքենավարներ, տրակտորիստներ։

1944 թ. փետրվարի 4-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն քննեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը գյուղատնտեսության վիճակի ու խնդիրների մասին։ Կուսակցության ղեկավար կենտրոնը արձանագրեց, որ Հայաստանի գյուղի աշխատավորները պատերազմի ծանր փորձությունների մեջ դրսևորել են պետական շահերի բարձր գիտակցություն, ավելի են ամրապնդել կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները, ավելացրել են գյուղատնտեսական կուլտուրաների արտադրությունը, տարեցտարի

15 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 6, գ. 35, թ. 98, 102։
16 Նույն տեղում, ց. 9, գ. 354, թ. 39—40։

լրիվ կատարել և նույնիսկ գերակատարել պետությանը հանձնվող գյուղատնտեսական մթերքների բոլոր առաջադրանքները, ինչպես նաև ապահովել բնակչության կարիքները։ Այդ որոշումը քննվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի 22-րդ պլենումում, վերլուծվեց Հայաստանի գյուղատնտեսության վիճակն ու խնդիրները, մշակվեցին կոնկրետ միջոցառումներ հետագա առաջընթացի համար[17]։

Բանվոր դասակարգի և գյուղացիության հետ համախմբված, բարձր հայրենասիրությամբ համակված աշխատում էին հայ գիտնականները, գրողները, արվեստի գործիչները և մտավորականության մյուս ջոկատները։ Սովետական պետությունը հատուկ հոգատարություն էր հանդես բերում Սովետական Հայաստանի ազգային մշակույթի հետագա զարգացման նկատմամբ։

1943 թ. նոյեմբերին հիմնադրվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան, որի կազմում միավորվեց գործող և նոր կազմակերպված մոտ 30 գիտահետազոտական ինստիտուտ։ Հայաստանի գիտնականներն իրենց կարողություններն ի սպաս դրեցին հայրենիքի պաշտպանությանը։

Անդուլ աշխատում էին բարձրագույն դպրոցները, շարունակվեց բարձրագույն կրթության զարգացումը։ Ռազմաճակատ մեկնեցին դասախոսներ, ուսուցիչներ, ուսանողներ[18]։ Սովետական Հայաստանի դպրոցն իրավունք ունի հպարտանալու իր հաղարավոր սաներով, որոնք հուշակվեցին ռազմի դաշտում, դարձան հերոսներ, սպաներ, գեներալներ։

Հայ գրականությունը, արվեստը անբաժան էին ժողովրդից, ապրում էին հայրենիքի հոգսերով։ Պատերազմի ամբողջ ընթացքում հայ գրականության և արվեստի դասականները, երիտասարդները, բոլոր ստեղծագործողներն իրենց տաղանդը ի սպաս դրեցին Մեծ հայրենականի հաղթանակին։ Ավ. Իսահակյանը ստեղծեց «Մարտակոչը»[19] և ուրիշ գործեր, Դերենիկ Դեմիրճյանը գրեց «Վարդանանք» պատմավեպը, որոնք ոգևորում էին հայ մարտիկներին։ Հովսեփ Օրբելին իր հրաշունչ ճառերով և «Պրավդայում» տպագրված «Հայերի ոխերիմ թշնամիները»[20] և այլ հոդվածներով դիմակազերծ էր անում ֆաշիստներին, բորբոքում ատելություն դեպի թշնամին։ Վահրամ Փափազյանը պաշարված Լենինգրադում զորամասից զորամաս էր անցնում, զինվորների համար կարդում հայ և համաշխարհային բանաստեղծության նմուշներ, մարտական ոգի հաղորդում հայրենիքի պաշտպաններին։

Հայ մտավորականները գրեցին «Հայ ժողովրդի նամակը հայ մարտիկներին»։ Այն իրենց ստորագրություններով վավերացրին հանրապետության 335 հազար աշխատավորներ[21]։

Սովետական մարտիկների սխրագործությունները ռազմաճակատում և ժողովրդի անձնվեր աշխատանքը թիկունքում ոգեկոչեցին արտասահմանյան

---

17 Տե՛ս ՍՄԿԿ ԿԿ-ին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, կապ. 1, գ. 2, թ. 3—31։

18 Տե՛ս «Հայաստանի ուսուցիչները Մեծ հայրենականում», Երևան, 1979, էջ 3—243։

19 «Правда», 2 փետրվարի, 1942։

20 «Правда», 27 փետրվարի, 1943։

21 «Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին». Երևան, 1943։ Նամակը հրապարակված է նաև «Պրավդա» և «Իզվեստիա» թերթերում 1943 թ. փետրվարի 27-ին։

երկրներում հանգրվանած սփյուռքահայ հայրենասերներին։ Նրանցից շատերը Ֆրանսիայում, Հունաստանում, Բուլղարիայում, Հարավսլավիայում, Իտալիայում և այլուր գենք վերցրին, մտան դիմադրական շարժման ջոկատները և քաջաբար կռվեցին ֆաշիզմի դեմ։ Հիշատակենք միայն լեգենդար Միսաք Մանուշյանին։ Սփյուռքի շատ հայ գործիչներ Ամերիկայում, Եգիպտոսում, Լիբանանում, Սիրիայում, Իրանում և ուրիշ երկրներում դարձան հակաֆաշիստական շարժման ակտիվ մասնակիցներ։ Նրանց նախաձեռնությամբ միջոցներ հավաքվեցին «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար, որը նվիրվեց սովետական բանակին։

Հայ ժողովուրդը, ինչպես և Սովետական Միության եղբայրական մյուս ժողովուրդները, պատվով դուրս եկավ ծանր պայքարից և իր արժանի ավանդը ներդրեց Մեծ հաղթանակի նվաճման գործում։